ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 3

«ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-25/26» ծածկագրով էլեկտրոնային աճուրդով ԵՊՀ Ֆիզիկայի ինստիտուտի կարիքների համար սառնարանի, անխափան սնուցման սարքերի և գույքի ձեռքբերման նպատակով կազմակերպված գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան, Ալեք Մանուկյան 1 «27» դեկտեմբերի 2024թ.,
ժամը 10:00

Մասնակցում էին՝
հանձնաժողովի նախագահ՝
Ռ. Ալլահվերդյան՝ (Գնահատող հանձնաժողովի նախագահ),
հանձնաժողովի անդամներ՝
Ա. Մարգարյան՝ (Գնահատող հանձնաժողովի անդամ),
Մ. Ռաֆայելյան՝ (Գնահատող հանձնաժողովի անդամ),
հանձնաժողովի քարտուղար՝
Լ. Այվազյան՝ (Գնահատող հանձնաժողովի քարտուղար):

1. Տեղեկատվություն՝ «ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-25/26» ծածկագրով ընթացակարգի շրջանակում ներկայացված հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին.

Հայտերը բացվել են www.eauction.armeps.am կայքի՝ էլեկտրոնային աճուրդների համակարգի (այսուհետ՝ Համակարգ) միջոցով՝ 2024 թ-ի դեկտեմբերի 16-ին՝ ժամը 12:00-ին:

Գնման ընթացակարգի հակադարձ աճուրդը մեկնարկել է 2024թ-ի դեկտեմբերի 17-ին՝ ժամը 12:00-ին, ավարտվել՝ 2024թ.-ի դեկտեմբերի 17-ին՝ ժամը 12:30-ին:

2. Տեղեկատվություն հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.

Ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

N	Մասնակցի անվանումը	Էլ. հասցե, հեռ.
1	ԴԻԶԻՖԼԵՔՍ ՍՊԸ	dgflexarm@gmail.com , (+374)77269765
2	Օրգանիքս ՍՊԸ	docs.organix@gmail.com , +37433486487 Органикс ООО
3	ԱՅԹԻ ԷԼԵԿՏՐՈՍՈՖԹ ՍՊԸ	h_davo@mail.ru , +37477474006 АЙТИ ЭЛЕКТРОСОФТ ООО
4	Սվետան ՍՊԸ	svetan6162@gmail.com , 093 26-34-85 СветанООО
5	ԷՄՀԱՐ ՍՊԸ	emharllc@gmail.com , 077 484008 ЭМАР ООО
6	Միկրորինգ ՍՊԸ	microring@arminco.com , +374 10 529421 ООО Микроринг
7	ԱՐԹ-ԳՐՈՒՊ ՍՊԸ	- , +37477567260 ООО Арт-Груп
8	ԳԱՐԱՆՏ 24 ՍՊԸ	creative.business1920@gmail.com , 041072007

3. Տեղեկատվություն յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գնի մասին.

Ընթացակարգով կայացած հակադարձ աճուրդում մասնակիցները ներկայացրել են հետևյալ վերջնական գնային առաջարկները.

Չափաբաժնի համար	Չափաբաժնի անվանումը	Զբաղեցրած տեղ	Ներկայացված հայտեր	Նախահաշվային գին	Վերջին առաջարկ			Մասնակցի կարգավիճակ*
					Արժեք	ԱԱՀ	Գին	
1	Երկդռնանի սառնարան	1	ԴԻԶԻՖԼԵՔՍ ՍՊԸ	170000	110600	20 %	132720.00	
		2	Օրգանիքս ՍՊԸ	170000	112000	20 %	134400.00	
		3	ԱՅԹԻ ԷԼԵԿՏՐՈՍՈՖԹ ՍՊԸ	170000	136000	20 %	163200.00	
		4	Սվետան ՍՊԸ	170000	169999	0 %	169999.00	
2	Անխափան սնուցման	1	ԷՄՀԱՐ ՍՊԸ	2611620	1450000	0 %	1450000.00	

Չափա-բաժնի համար	Չափաբաժնի անվանումը	Զբաղեց-րած տեղ	Ներկայացված հայտեր	Նախահաշ-վային գին	Վերջին առաջարկ			Մասնակցի կարգա-վիճակ*
					Արժեք	ԱԱՀ	Գին	
		3	ԱՐԹ-ԳՐՈՒՊ ՍՊԸ	2611620	2125000	20 %	2550000.00	
		4	ԳԱՐԱՆՏ 24 ՍՊԸ	2611620	4000000000	20 %	4800000000.00	Մերժված
3	Անխափան սնուցման սարք	1	Միկրոռինգ ՍՊԸ	395640	321750	20 %	386100.00	
		2	ԱՐԹ-ԳՐՈՒՊ ՍՊԸ	395640	325000	20 %	390000.00	
		3	ԷՄՀԱՐ ՍՊԸ	395640	1000000	0 %	1000000.00	Մերժված
4	Անխափան սնուցման սարք սերվերային	1	ԷՄՀԱՐ ՍՊԸ	2850000	1850000	0 %	1850000.00	
		2	Միկրոռինգ ՍՊԸ	2850000	2126600	20 %	2551920.00	
		3	ԱՐԹ-ԳՐՈՒՊ ՍՊԸ	2850000	2333333.33	20 %	2799999.99	
		4	ԳԱՐԱՆՏ 24 ՍՊԸ	2850000	4000000000	20 %	4800000000.00	Մերժված
6	Արհեստական բույս ծաղկամանով	1	Սվետան ՍՊԸ	120000	130000	0 %	130000.00	Մերժված

* Մերժման հիմք՝ նախահաշվային գնի գերազանցում:

4. Տեղեկատվություն՝ ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (Կարգի) 32-րդ կետի 25-րդ ենթակետով նախատեսված հիմնավորումների վերաբերյալ.

Հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից գնահատող հանձնաժողովի քարտուղարին հիմնավորումներ չեն ներկայացվել:

5.Տեղեկատվություն՝ հայտերի վերաբերյալ հարցման և պարզաբանման/պատասխանի մասին.

Հայտերի վերաբերյալ հարցում չի եղել:

6. Տեղեկատվություն հակադարձ աճուրդի արդյունքում (յուրաքանչյուր չափաբաժնի մասով) ընտրված մասնակիցներից ստացված հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության, հայտերի կազմման և ներկայացման, հրավերի պահանջներին դրանց համապատասխանության մասին:

Համակարգի կողմից ընտրված մասնակիցներից ստացված հայտերում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթեր:

7. Տեղեկատվություն գնման գործընթացի գնահատման ընթացքում արձանագրված անհամապատասխանությունների շտկման և/կամ չշտկման մասին.

Մասնակիցները սահմանված ժամանակահատվածում համակարգում կատարել են շտկումներ:

Գնահատող հանձնաժողովը արձանագրել է.

2- րդ և 4-րդ չափաբաժիններով առաջարկած IST3J-6 մոդոլի տեխնիկական պարամետրերը չեն համապատասխանում մրցույթի տեխնիկական պարամետրերին, մասնավորապես՝

ա. Մրցույթի տեխնիկական բնութագրում նշված է՝ մուտքային հաճախությունը՝ 40 - 70 Հց, իսկ իրենց IST3J-6 մոդելում՝ 50-60 Հց:

բ. Ջերմաստիճանային տիրույթը մրցույթում նշված է -15 -ից +45, իսկ առաջարկած մոդելի տեխնիկականում՝ -5 +40:

գ. Մրցույթում նշված է՝ 6 հատ IEC 320 C13 տիպի ելքային միակցիչ, 2 հատ IEC 320 C19 տիպի ելքային միակցիչ, սակայն առաջարկած մոդելի տեխնիկականում՝ նշված է 2 ելքային միակցիչ:

Առաջարկած մոդելի տեխնիկական բնութագիրը բաց հասանելի է համացանցում՝ https://ups.aecups.com/wp-content/uploads/UPS-Online-single-phase-Rack-IST3J.pdf

Ելնելով վերը նվաշից՝ նշված 2 և 4 չափաբաժիններով առաջին տեղ զբաղացրած կազմակերպությանը անհրաժեշտ է մերժել:

8. Տեղեկատվություն առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի համաձայն գնահատող հանձնաժողովը որոշեց 1-ին տեղ զբաղեցրած /ընտրված/ ճանաչել՝

N	Մասնակցի անվանում	Չափաբաժնի համար
1	ԴԻՋԻՖԼԵՔՍ ՍՊԸ	1
2	ՄԻԿՈՈՐԻՆԳ ՍՊԸ	3

9. Տեղեկատվություն գնահատման արդյունքների մասին:

9.1 Հանձնաժողովը որոշեց՝ հրապարակել հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին՝ 1-ին և 3-րդ չափաբաժինների համար: «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն անգործության ժամկետը սահմանվում է 10 օրացուցային օր, որից հետո ընտրված մասնակիցին ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ ԷԱՃ-ի կազմակերպման կարգին համապատասխան:

9.2 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը՝ գնման գործընթացը հայտարարել չկայացած 2-րդ և 4-րդ չափաբաժինների մասով, հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին հիմնավորմամբ:

9.3 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 3-րդ մասը՝ տեղեկագրում ԷԱՃ համակարգի միջոցով հրպարակել հայտարարություն չկայացած գնման ընթացակարգի մասին՝ 2-րդ և 4-րդ չափաբաժինների համար:

10. Տեղեկություն՝ հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրվա, ժամի և վայրի մասին:

Անհրաժեշտության դեպքում «ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-25/26» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստ կհրավիրվի:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ Ռ. Ալլահվերդյան _____ ստորագրություն

Անդամներ՝ Ա. Մարգարյան _____ ստորագրություն

Մ. Ռաֆայելյան _____ ստորագրություն

Քարտուղար՝ Լ. Այվազյան _____ ստորագրություն